ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2024 թվական N 66-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ, ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ, ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով ու 19-րդ հոդվածով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի 2024 թվականի փետրվարի 15-ի՝ 2024 թվականին հնարավոր գարնանային հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովող միջոցառումների իրականացման մասին N95/16/57 գրությունը,

ո ր ո շ ու մ եմ՝

1. Հաստատել՝

1) Սյունիքի մարզում 2024 թվականին գարնանային հնարավոր հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովելու, դրանց հետևանքները կանխելու, նվազեցնելու, վերացնելու նպատակով մարզային հանձնաժողովի կազմը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Սյունիքի մարզում 2024 թվականին գարնանային հնարավոր հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովելու, դրանց հետևանքները կանխելու, նվազեցնելու և վերացնելու նպատակով կանխարգելիչ միջոցառումների պլանը՝ համաձայն N2 հավելվածի:

2 Հեղեղումների կանխարգելիչ միջոցառումների ցանկում ընդգրկված մարզի համայնքների ղեկավարներին առաջարկել՝ ապահովելու պլանով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետ՝ **Ռ. Ղուկասյան**

Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ

2024թ. փետրվարի 16
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ.փետրվարի____-ի N 66-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀՀ Սյունիքի մարզում 2024թ. գարնանային հնարավոր հեղեղումներից և սելավներից բնակչության պաշտպանությունն ապահովելու նպատակով ստեղծված հանձնաժողովի

Հ.Հարությունյան	– Մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Կ. Բալյան	– Մարզպետի խորհրդական
Դ.Հովհաննիսյան	– ՀՀ ՆԳՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ (համաձայնությամբ)
Ս.Ավետիսյան	– Մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻՀ վարչության պետ
Ռ.Կոստանդյան	– Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
Ն. Գևորգյան	– Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
Մ.Կոստանդյան	– Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ
Է.Միրզոյան	– Մարզպետի աշխատակազմի փորձագետ
Ա.Գևորգյան	– «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ Սյունիքի մարզի ստորաբաժանումների համակարգող (համաձայնությամբ)

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար **Է.Մարտիրոսյան**

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. փետրվարի ____-ի N 66-Ա որոշման

ՊԼԱՆ

ՀՀ Սյունիքի մարզում 2024թ. գարնանային հնարավոր հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովելու, դրանց հետևանքները կանխելու, նվազեցնելու և վերացնելու նպատակով կանխարգելիչ միջոցառումների

Հ/Հ	Միջոցառումների անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Պատասխանատու
	Հակահեղեղային առաջնահերթ միջոցառումները			
1	Գետերի ջրի մակարդակի բարձրացման և օդի բարձր ջերմաստիճանի դեպքում, օրվա ընթացքում 2 անգամ (7^{00} և 19^{00}), տվյալների հաղորդել Սյունիքի ՄՓՎ ՃԿԿ օպերատիվ հերթապահին	Մարզի հիդրոօդերևութաբանական ծառայություն պետ	Հեղեղումների ժամանակաշրջանում՝ ամենօրյա	Մարզի հիդրոօդերևութաբանական ծառայություն
2	Հեղեղավտանգ վայրերում հսկողության իրականացում և հեղեղների սպառնալիքի կամ առաջացման դեպքում Սյունիքի ՄՓՎ ՃԿԿ հաղորդում	Տեղական ինքնակառավարման մարմիններ, կազմակերպություններ	Հեղեղումների ժամանակաշրջանում	Համայնքների, կազմակերպությունների ղեկավարներ
3	Հեղեղավտանգ գոտիներում գտնվող օբյեկտներում (ձեռնարկություններ, բենզալցակայան և սննդի կետեր, շուկաներ) և հողատարածքներում աշխատողների, երթուղիներով երթևեկողների զգուշացում, հարկ եղած դեպքում վտանգավոր գոտուց դուրս բերում	Համայնքապետարաններ, պետավտոտեսչության և ոստիկանության մարմիններ	Մինչև հեղեղումների ավարտը	ՀՀ Սյունիքի մարզի տարահանման հանձնաժողով, ՔՊ մարզի հասարակական կարգի պահպանման ծառայության պետ
4	Հեղեղավտանգ գոտում գտնվող համայնքների, օբյեկտների և մարզպետարանի միջև անխափան կապի ապահովում	Մարզի հեռախոսակապն ապահովող կազմակերպություններ	Մինչև հեղեղումների ավարտը	Հեռախոսակապի օպերատորներ Viva MTS, Beeline, Ucom

5	Սպանդարյանի, Տոլորսի, Անգեղակոթի, Շամբի և Գեղիի ջրամբարների ինժեներատեխնիկական հսկողության ուժեղացում և անվտանգության ապահովում	Ջրամբարները շահագործող կազմակերպությունների ղեկավարներ, համայնքապետարաններ	Մինչև հեղեղումների ավարտը	Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
6	Հեղեղումներից տուժած բնակչության բուժական օգնության ցուցաբերելու համար նախապատրաստական միջոցառումների իրականացում	Մարզի առողջապահական հաստատություններ	Մինչև հեղեղումների ավարտը	Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
7	Հակահեղեղային միջոցառումների կազմակերպման ընթացքում համայնքների ղեկավարներին մեթոդական և կազմակերպական աջակցության ցուցաբերում	Մարզային փրկարարական վարչություն, մարզի ՔՊ ծառայություններ	Հեղեղումների հետևանքով ստեղծված արտակարգ իրավիճակների դեպքում	Մարզային փրկարարական վարչության պետ
8	Հակահեղեղային միջոցառումների կազմակերպման ընթացքում լրատվամիջոցներով բնակչության իրազեկում	Մարզային փրկարարական վարչություն, մարզի լրատվամիջոցներ	Մինչև հեղեղումների ավարտը	Մարզային փրկարարական վարչության պետ
9.	Սելավատարների, ոռոգման մայրուղիների մաքրում և գլխամասային կառույցների ամրացում	Համայնքապետարաններ	2024 թվականի մարտ-մայիս ամիսներ	Համայնքների ղեկավարներ
	Կանխարգելիչ ինժեներական միջոցառումների իրականացում			
Հ/Հ	Հեղեղավտանգ տարածքների նկարագիրը	Իրականացվող միջոցառումները	Կատարման ժամկետը	Պատասխանատու
1.	Ներհամայնքային սելավատարներ, ոռոգման մայրուղիներ և գլխամասային կառույցներ	Սելավատարների, ոռոգման մայրուղիների մաքրում և գլխամասային կառույցների ամրացում	2024 թվականի մարտ-մայիս ամիսներ	Համայնքների ղեկավարներ
2.	**<u>Սիսիան համայնք</u>** Հեղեղավտանգ բնակավայրերի առափնյան տնտեսություններ և վարելահողեր	Վերացնել բերվածքները, մաքրել (Այրի, Սիսիան, Արեգլի, Լորագետ, Հարամ) գետերի հունը և սելավատարերը աղբից	2024 թվականի մարտ-մայիս ամիսներ	Սիսիան համայնքի ղեկավար

3.	**Քաջարան համայնք** Հեղեղավտանգ բնակավայրերի առափնյան տնտեսություններ և վարելահողեր	Վերացնել բերվածքները, մաքրել (Ողջի, Գեղի) գետերի հունը և սելավատարերը աղբից	2024 թվականի մարտ-մայիս ամիսներ	Քաջարան համայնքի ղեկավար
4.	**Կապան համայնք** Հեղեղավտանգ բնակավայրերի առափնյան տնտեսություններ և վարելահողեր	Վերացնել բերվածքները, մաքրել (Վաչագան, Ողջի) գետերի հունը և սելավատարերը աղբից	2024 թվականի մարտ-մայիս ամիսներ	Կապան համայնքի ղեկավար
5.	**Մեղրի համայնք** Հեղեղավտանգ բնակավայրերի առափնյան տնտեսություններ և վարելահողեր	Վերացնել բերվածքները, մաքրել Մեղրի գետի հունը և սելավատարերը աղբից	2024 թվականի մարտ-մայիս ամիսներ	Մեղրի համայնքի ղեկավար

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար **Է.Մարտիրոսյան**